ՀԱՐՑԱԹԵՐԹ

Աշխարհագրություն առարկայի դպրոցական օլիմպիադայի
առաջին (դպրոցական) փուլի – 2016 թ.

/Տևողությունը 120 րոպե/

<u>9-րդ դասարան</u>

Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

1. ***Երկրի, մայրցամաքների, առանձին պետությունների բնությունը, այնտեղ ընթացող երևույթներն ուսումնասիրում է.***
   1) քարտեզագրությունը
   2) աստղագիտությունը
   3) ֆիզիկական (բնական) աշխարհագրությունը
   4) տնտեսական և սոցիալական (հասարակական) աշխարհագրությունը:
2. ***Տեղանքում կարելի է կողմնորոշվել.***
   1) Բևեռային աստղով
   2) նորալուսնով
   3) աստղակերպերով
   4) Մարս մոլորակով:
3. ***Եթե քարտեզի անվանական մասշտաբը 1 սմ-ում 50 կմ է, ապա դրա թվային մասշտաբը կլինի.***
   1) 1:50000 3) 1:5000000
   2) 1:500000 4)1: 50 000 000:
4. ***Աշխարհագրական լայնությունները լինում են.***
   1) 0^0-90^0, 2) 0^0-180^0, 3) 0^0-270^0, 4) 0^0-360^0:
5. ***Ժամային գոտիները սահմանազատված են.***
   1) զուգահեռականներով
   2) միջօրեականներով
   3) արևադարձերով
   4) հասարակածով:
6. ***Նստվածքային օրգանական ծագման ապար է.***
   1) կավը, 2) տուֆը, 3) ավազը, 4) տորֆը:
7. ***«Գետ-օվկիանոս» զույգից ընտրել սխալը.***
   1) Մակենզի – Խաղաղ
   2) Գանգես – Հնդկական
   3) Կոնգո - Ատլանտյան
   4) Օբ - Հյուսիսային սառուցյալ:
8. ***Ո՞ր պնդումն է սխալ.***
   1) Արաքսն անվանել են «կամուրջներ չհանդուրժող» գետ
   2) Ստորին հոսանքում Արաքսը հոսում է դաշտավայրերով,
   3) Արաքսը սկիզբ է առնում Ծաղկանց լեռների սառնորակ աղբյուրներից,
   4) Արաքսի ձախակողմյան վտակներից են Հրազդանը, Արփան, Ողջին:
9. ***Բնութագրումով որոշել պետությունը.***
   Տարածքով գերխոշոր պետություն է: Հարուստ է ջրային և անտառային ռեսուրսներով: Աչքի է ընկնում երկաթաքարի արդյունահանմամբ և արտահանմամբ: Ո՞ր պետությունն է.
   1) Չինաստան 3) Իրան
   2) Ավստրալիա 4) Բրազիլիա:

10. *Ո՞ր պնդումն է սխալ.*
   1) երբ ծնելիությունը հավասար է մահացությանը, վերարտադրությունը կոչվում է պարզ:
   2) զարգացող երկրներին բնորոշ է նեղ հիմքով, համեմատաբար լայն գագաթով սեռատարիքային բուրգ,
   3) զարգացած երկրներում, բնակչության սեռային կազմում, կանանց թիվը գերազանցում է տղամարդկանց թվին,
   4) Եվրոպական երկրներում ձևավորվել է բնակչության վերարտադրության առաջին տիպը:
11. *«Մշակաբույս-առաջատար երկիր» զույգերից ընտրել սխալը.*
   1) թեյ – Հնդկաստան
   2) վուշ – Ռուսաստան
   3) կաուչուկատու հևեա - Մալայզիա
   4) սուրճ - Եթովպիա:
12. *ՆԱԵԿ-ի անդամ երկիր չէ.*
   1) Ֆրանսիան 3) Քուվեյթը
   2) Վենեսուելան 4) Ինդոնեզիան:
13. *Չինացիների ազգային կրոն է.*
   1) սինթոյականությունը
   2) կոնֆուցիականությունը
   3) քրիստոնեությունը
   4) հուդայականությունը:
14. *ՀՀ-ում գունավոր մետաղածուլության ճյուղ չէ.*
   1) ոսկու արդյունաբերությունը
   2) պղնձածուլությունը
   3) մոլիբդենի արդյունաբերությունը
   4) նիկելի արդյունաբերությունը:
15. *ՀՀ ո՞ր մարզում է Շիկահողի արգելոցը.*
   1) Տավուշի 3) Սյունիքի
   2) Արարատի 4) Լոռու:

Կարճ պատասխանով առաջադրանքներ

16. *Վայրի աշխարհագրական կոորդինատներն են՝ հս.լ. 28°30՛ և արլ. ե.90°: Որոշել Արեգակի ճառագայթների անկման անկյունը դեկտեմբերի 22-ին:*
17. *Օդի բացարձակ խոնավությունը 15 գ/մ³ է, իսկ այն հագեցնելու համար անհրաժեշտ է 30 գ: Որոշել օդի հարաբերական խոնավությունը:*
18. *Գետի լայնությունը 10 մ է, միջին խորությունը՝ 80 սմ, իսկ ջրի արագությունը՝8 մ/վրկ: Որոշել գետի ծախսը:*
19. *Երկրի տարածքը՝ 24000 կմ² է, բնակչության թիվը՝ 4,8 մլն մարդ: Որոշել բնակչության միջին խտությունը:*
20. *Որքա՞ն է 30 տոննա նավթին համարժեք պայմանական վառելիքի քանակը, եթե նրա ջերմային գործակիցը 1,5 է.*